

Կողմերը չորս չորս ծագիչ ատամնաքներ ունի ջրան նման : Ա երի կողման լնտերը մազոտ է և ակռաները կարծես թէ բռնի շրթունքը պատռելով դուրս կ'ելլեն . բայց ամենաեխն արգելք մը չեն ըլլար որ և իցէ խորտուքորտ և պինդ բաներ կրծելու :

Ի՞օդամիսը հինգ մատ ունի իւրաքանչիւր թաթին վրայ . առջեի թաթերուն բթամատերը շատ կարծ են , իսկ մնացածները բաւականապէս երկայն . ետեի թաթերունը իրարու կպած են լուղական կենդանեաց պէս . բոլոր մատուցները լայն ու կարծր ձիրաններ ունին . պոշը , ինչպէս ըսինք վերը , երկայն է , կոնաձե , ուժով , թեփոտ , հաստը մազերով : Կենդանաբանք աս կենդանութիւնը զննելով տեսեր են որ հագագը կամ թէ շնչառու . թեան խողովակը , ոնդաց վարի մասին հետ միացած է եղեր ձագարի ձեռով , որով և մէկ շնչառութեան ծակ ունի . աս պատճառաւ ջրին երեսը լողալու ատենը բոլոր բերանը ջրին մէջը կ'ըլլայ , և ոնդունքը միայն անմիջապէս ջրէն վեր . դարձեալ հագագին աս տեսակ կազմութեանը պատճառաւ անկարող է ձայնի ելեկջ ունենալու և միայն սուր ու խայթող ձայն մը կրնայ հանել :

Խակ այս կենդանուցյա բնութեանը գալով , կենդանաբանք շատ հեղաբարոյ է կ'ըսեն և անվնաս . բռնուելէն ետքը շուտով կ'ընտանենայ զինքը մնուցողներուն և վրան սէր ցուցընողներուն հետ . զինքը չարչարեն նէ ալ , դիմացինին վնաս մը ըներ , և ոչ ալ ձայն մը կը հանէ ինչ շուան որ խիստ չնեղուի վիրաւորուելու շափ , և ան ատեն սուր ձայն մը միայն կը հանէ : Խոտով միայն կը սնանի :

Դոս դրած պատկերնիս անմիջապէս աս կենդանիս տեսնող և մնուցանող ոնձէ մը նկարուած է որ նաև այս յետագայ տեղեկութիւնները կուտայ :

“ Ի՞օդամիսին իմացականութիւնը ատ նուազ է , շարժմունքը դանդաղ և մնչնորհք , իր կերպարանքը շատ կը յիշցընէ ջրային մեծ մուկը՝ բայց առանց մնոր աշխուժութիւնը ունենալու : Ի՞ու

լոր ժամանակը հանգչելու , քնանալու և ուտելու կ'անցընէ : Կրիկունները կամ ինչպէս նաև գիշերներ իրեն գործունելութեան ժամանակն է , թէպէտե կենդանուցյա մը բնութիւնը իմանալու համար իր ազատ վիճակին մէջ զինքը տեսնելու է , և ոչ գերութեան մէջ : Կարելի է որ իր ծննդեան կլիմային տակ ինչպէս է Արևէ , Կարակուա , Պուէնու-Ռայրէս , և Ղիւքիւմանի գաւառը ուր որ աւելի շատ կը գտնուի թերեւս հոն աւելի աշխոյժ ու արթուն ըլլայ իմանալու համար իրեն բնական թշնամիները և անոնց ձեռքէն փախչելու : Այս թէպէտ ամէն տարի այս կենդանին էս անբաւ բազմութիւն մը կը սպանուի որպէս զի կաշին Խըրոպա բերուի , բայց ՚ի վերայ այսր ամենայնի գեռ ասկէ աւելի ստոյգ ծանօթութիւն մը չունինք աս կենդանուցյա բարուցն և կենացը վրայ , թէպէտ և շատ գիտնալու արժանի բաներ հարկ է որ ըլլան , եթէ ինչպէս որ պէտք է նէ դիտուի ու քըննուի , :

**Մուքուայի մեծ զանգակին տեղափոխորիշնիր<sup>1</sup>** , և երեկոյի զանգակաց ճանրուրիշնիր :

Խայս զանգակաց թագաւորն , որ շատ տարիներէ ՚ի վեր հողուն մէջ խրած էր , հիմա նորոգեալ Վրեմինի գիսաւոր զարգերէն մէկն է . Անձութեանն համար կրնայ շէնք մը ըսուիլ , վասն զի 6<sup>մ</sup>, 67 բարձրութիւն ունի , 7<sup>մ</sup>, 29 տրամազիծ , իսկ ծանրուին է 253,912 հազարակրամ : Խափուեցաւ 1733<sup>մ</sup> Կննա Խւանովնա կայսրուհոյն իշխանութեանն ատեն , Վելքսիս Վիքայելը վիչ կայսեր զանգակին տեղը բռնելու համար , որ Վրեմինի հրդեհէն ջախջախուած էր 1701<sup>մ</sup> :

Ա ախնալով որ այսպիսի ահագին զանգուած մը չկարենան դիւրաւ շարժել մեծին Խւանայ զանգակատան մօտ

<sup>1</sup> Այս զանգակին վրայօք համառօտ տեղեկութիւն մը տես Բ հատոր Բազմավ . Երես 125 :

Թափեցին ուր որ պիտի կախուէր : Ի՞այց երբ ձուլուածքը կարծուածէն աւելի յաջողութեամբ լըմբնյաւ՝ մըտքերնին փոխեցին, աւելի խոհեմութիւն սեպեցին զանգակին վրայ զանգակատուն մը կանգնել՝ քան թէ զանգակը տանել իր զանգակատունը : Ը ատ մը իրարու հաղորդակից դահլիճներ այլ և այլ բարձրութեամբ նոր շենքը հինին չետ պիտի միացընէին : Ի՞այց երբ այս առաջարկութիւնը 'ի գործ դրուելու վրայ էր 1737<sup>ն</sup> սոսկալի հրդեհ մը Վրեմլինը նորէն այրեց, հանդերձ այն գործատունով ուր զանգակը ձուլուածէր : Ո այրկենի մը մէջ զանգակին վրայ այնչափ կրակ կտրած գերաններ ընկան որ անկարելի եղաւ մարելը, զանգակն արդէն կրակի գոյն դարձեր էր և տփիտաբար վրան նետուած ջրոյն շոգիանալէն ձաթեցաւ :

Ետևէ ետև եկող Որուսաց ամէն կայսերք փափագեցան այս հոչակաւոր զանգակը նորէն կանգնել, բայց վախով ետ կեցան ինչուան 1819, ու նոյն տարին Ո՞նֆերրան գաղղիացի ձարբարապետը, որ Ո՞լեքսանդր Ա կայսեր ծառայութեան մէջ էր (և 1858<sup>ն</sup> մեռաւ), հրաման առաւ այն տեղերը քննել և ծանօթութիւն մը տալ հանդերձ պատկերներով, և ցըցուց որ իրաւցընէ 1737<sup>ն</sup> հրդեհէն զանգակը շատ վնասուեր ու մեծ կտոր մ'ալ փրթեր էր անկէց : Կիկողոս կայսրն ալ ուզեց փորձել թէ արդեօք արուեստը կրնայ վնասին դարման տանիլ ու նորէն դարձնել զանգակին ձայնը . բայց իմանալով որ զանգակին չափազանց մեծութեանը պատճառաւ անկարելի էր չափաւոր զանգակաց նորոգուելու հնարքները բանեցընել, հրաման տուաւ որ խրուած խոշէն դուրս հանեն զանգակը ու մեծին Խանայ զանգակատան մօտ պատուանդանի մը վրայ դնեն :

Ո՞նֆերրան նորէն Ո՞սքուա գնաց 1836<sup>ն</sup>. առաջին հոգն եղաւ 9<sup>ր</sup>, 75 խորութեամբ զանգակին ցորս դին հողը փորել ու հաստատուն մարդակ մը շինել հողուն հոսելին աղատելու համար .

ու երբ ասով յաջողեցաւ աղէկ մը քննել, տեսաւ որ փրթած կտորէն զատ ուրիշ վնաս մը չունէր ու կարելի էր վերցընել ու փոխադրել առանց նոր վնասու մը :

Այս հարկաւոր բանը ձանչնալէն ետև ձարտարապետը իր ատաղձեղէնները սկսաւ շինել, ու հինգ շաբաթուան մէջ լմբնցուց . ապրիլի 30<sup>ն</sup> առաւտու անթիւ բազմութիւն ջերմեռանդութեամբ “ զբէղ Աստուած ”, երգը երգելին վերջը, ձարտարապետը նշան տուաւ որ սկսին գուրս քաշել : Խողովուրդն ու գործաւորները միաբան եռանդեամբ երեսնին խաչակնքեցին ու մեքենաները սկսան շարժիլ : Ո՞չի բերան երբ ձոպաններն սկսան քաշուիլ ձարձատելու ձայններ լսուեցան, բայց ատաղձները այնպէս ամուր էին որ քիչ ատենէն վիթխարի զանգակը սկսաւ գուրս երևնալ, երկու ձոպան կոտրեցաւ ու բազմնախախարակ մը ջախջախուելով չուաններուն մէջ ընկաւ, սակայն վեր վերցընելը չարգիլուեցաւ : Խոր լսութիւն մը կը տիրէր տեսանողաց բազմութեանը մէջ, միայն գործողութիւնը հրամայողին ձայնը կը լսուէր և անիւներուն ու չուաններուն դղրդումը : Ի՞այց վախով խառնուած հոգ մը կարծես թէ երթալով յաջողութեան յոյսը կը տկարացընէր, ու այն անձինքը որ առաջ ձարտարապետին չորս կողմը առած ուրախակից կ'ըլլային, կամաց կամաց հեռացեր էին . իսկ ինքը տեսնելով որ գեռ ինն անուորդ մնացեր են և համարձակ կը շարժին, բաւականէն ալ աւելի սեպելով յոյսը չկորսընցուց Օ անգակին մօտը կեցած, որ անզգառկերպով բարձրութեան երլորդ մասնելեր էր, սանդուղ մը դնել տուաւ հոգու որ չորս գործաւորներ դիւրաւ երթագան վրան և ձոպանները շտկեն :

Ակայն գործողութիւնը կը դժուարանար . վասն զի երկու ձոպանաց կուտրուելին վերջը, զանգակը կողմնակի ու զութիւն մը առնելով դժուարաւ գերազանար, և երբոր այս դժուարութեան դարման տանել կը մտածէին :

Երկու ուրիշ ձոպաններ ալ մէկէն կը-  
տրեցան : Պիտք եղաւ դադրեցընելու  
հրամանը տալ, վախը ամենուն տիրեր  
էր . զանգակին վրայ կեցող չորս գոր-  
ծաւորներէն երեքը շտապաւ փախան ,  
մէկը միայն անվախ կեցեր ձարտարա-  
պետին հրամաններուն կը սպասէր , որ  
զրկեց զինքը փոսին մէջ իջնալ և կա-  
խուած զանգակին սակը մոյթեր դնել :  
Այս գերաններուն վրայ ինջաւ մնաց  
զանգակը , ինչուան որ պէտք եղած նո-  
րոգութիւնն և գարմանը տարին , որ տե-  
ւեց ինչուան յուղիսի 23 . այն օրը աշ-  
խատութիւնները նորէն սկսան , տասը  
անուորդ աւելի ունենալով : Այսաւօտը  
կանուխ գործաւորները տեղերնին շա-  
րուած ձեռք զարկին անուորդներուն ,  
և երբ նշանը տրուեցաւ աշխատու-  
թիւնը սկսաւ :

Դարե մը 'ի վեր փոսին մէջ թա-  
ղուած և հողով ծածկուած զանգակը  
սկսաւ կամաց կամաց դուրս ելալ ու իր  
ահագին զանգուածին համար շինուած  
մարդակին տակ մտնել . 43 վայրկեան  
բաւական եղաւ այս ձարտար գործո-  
ղութեանս համար , որուն յաջողու-  
թեանը տարակոյս չմնաց : Փոսը մէկէն  
ծածկեցին գերաններով ու փայտայա-  
տակով մը , և վրան քաշեցին՝ զանգակը  
փոխադրելու համար շինուած սայլը , ու  
վերցընելով զանգակը պատրաստուած  
պատուանդանին վրայ զետեղեցին :

Ոսքուայի զանգակը որ արդէն զար-  
մանակի է իր մեծութեամբն և ձեռվը ,  
վրան աղուոր քանգակիներ ալ ունի ,  
երկու խորաքանդակք Ալքսիս Ար-  
քայելովիչ կայսեր և Աննա Խւանովնա  
կայսրուհոյն կենդանագիրներն են ,  
ոտքի վրայ կեցած բնական մեծու-  
թեամբ , բայց անկատար շինուած :  
Այս կենդանագիրներուն մէժտեղը մա-  
գաղաթաձեկի մը վրայ հրեշտակներ  
կան , և երկու արձանագրութեանց ան-  
կատար գրուածքներ , որոնցմէ քանի  
մը բառեր միայն կը կարդացուին ու  
բան չհասկըցուիր : Ա երին մասին վրայ  
Վրիստոսի , Աուրբ Աստուածածնին  
և աւետարանչաց պատկերները կան :

Իսամկաց աւանդութել նայելով զան-  
գակին ձոյլը մեծ քանակ մ'ալ ոսկւոյ  
ու արծաթոյ պիտի ունենայ , զոր հա-  
րուստ ու ջերմեռանդն անձինք առա-  
տաձեւնութեամբ կը նետեն եղեր հա-  
լոցին մէջ ձուլելու ատեն , և զանգակին  
ձերմակ գոյնն ալ , որ ուրիշ զանգակ-  
ներու վրայ շտեսնուիր , այս աւանդու-  
թիւնը քիչ մը հաւատալի կրնար ընել .  
Կատ անգամ փափագեր էին ստուգե-  
լու թէ այս կարծիքս որչափ հաւաստիք  
ունի , բայց Ոսքուայի ժողովրդեան  
յարգութիւնը այնչափ մեծ էր զանգա-  
կին համար , որ և ոչ պզտի կտոր մ'ալ  
կը թողուր փրցընելու՝ լուծելու ու քըն-  
նելու համար : Իսայց օրովհետեւ կայս-  
րը հրամայեր էր որ զանգակին վրայ  
խաչ մը անցընեն , ի հարկէ պէտք էր որ  
վրան քիչ մը փորուէր , արդ այն փորուած  
կտորները բովուց ժողովքին գործանո-  
ցը զրկուելով լուծուեցան ու հետեւեալ  
բաղադրութիւնն իմացուեցաւ .

Պղինձ . . . .	84 , 51
Լնագ . . . .	13 , 21
Դաճումք . . . .	1 , 25
Լորուստ . . . .	1 , 03

Կորուստը զինկէն ու զառիկէն ա-  
ռաջ կուգայ , որոնց հետքը ձանցուե-  
ցաւ , և այսպէս ոսկւոյ ու արծաթոյ  
կարծիքը փարատեցաւ :

Օ անգակաց թագաւորը հիմա ամե-  
նուն աշքին ներկայ է Վրեմլինի մեծ  
հրապարակին մէջ տեղը , կուանիտէ գե-  
ղեցիկ պատուանդանի մը վրայ , մեծին  
Խւանայ զանգակատան խարսխին մօտ :

Ո բան գունտ մը դրուած է . անոր վրայ  
ալ յունական խաչ մը ոսկեզօծ պղնձէ .  
որով ամբողջ զանգակին բարձրութիւնը  
կը լլայ 11 մէտր . գրիթած կտորն ալ  
պատուանդանին երեսներուն մէկուն  
դէմ կոթնցուցած են . ասանկով զան-  
գակին ներսի կողմն ալ կրնայ տեսնուիլ  
այն կոտրած կողմէն :

Այս առթով դնենք հոս աշխարհ-  
քիս երեելի զանգակաց ծանրութիւնը  
գաղղիական հազարակրամով .

Մուգուա	, 1736	, Խորտակնալ
1737	.	.
Մուգուա	, 1507	.
Մուգուա	, 1807	.
Նովկորոս	.	.
Օլմից	.	.
Վիեննա	.	.
Ուէսդմինսթը	1856	.
Երֆուրթ	, 1497	.
Սան (Sens)	.	.
Բարիզ	, 1680	.
Մոնրէալ	, 1847	.
Գուլոնիա	, 1448	.
Պրէզլաւ	, 1507	.
Կորլից	.	.
Եորք	, 1845	.
Պրիմ	, 1680	.
Հռոմ	, Ս . Պետրոս	.
Օբովլըրտ	, 1680	.
Լուչէոնա	, 1636	.
Հալպէրշդատ	, 1457	.
Անվէրսա	.	.
Պրիկուէլ	.	.
Տանգիկ	, 1453	.
Պուլոներ	.	.
Լիգոլն	, 1834	.
Երզդէր	, 1678	.
Լոնտրա	, Ս . Պողոս	, 1745
Կան	.	.
Լինգոլն	, 1610	.
Ուէսդմինսթը	, 1857	.

կանութեան ապագայ յառաջադիմութեանց սերմանքն, սրպիսի պատուոյ և փառաց չեն արդեօք արժանաւոր այն մարդիկն, որ առանց նուաստացընելու զիտութիւնն, ամենուն դիւրահաւանալի կ'ընեն, և վերացական բարձրագոյն հայեցողութիւնները ամէն մըտաց հասանելի կը գործեն:

Կնուանի գիտնականն, որուն վարուցն ու երկասիրութեանց համառօտութիւնն հոս պիտի ընծայենք, մանկութենէ տուաւ զինքը գիտութեանց ուսմանը: Իր աշխատանացն և ոչ այլումեք պարտական է պատանեկութեան ժամանակն ունեցած ընդարձակ տեղեկութիւնները, որոնցմով գերազանցեց քան զայն ամէնը որ նոյն նպատակին կը դիմէին: «Ետ որոյ կրցաւ ըմբռնել թէ ինչ է գիտութիւնն ըստ ինքեան, յետ որոյ իւր ընդարձակ իմացականութիւնը կարող եղաւ վերահասու ըլլալ անոր շահաւէտ գործադրութեանցը, հասկրցաւ նաև վախճանն որ իւրաքանչիւր ոք պիտի դիտէ իր ուսմանց մէջ: Դշմարիտ իմաստնոյն պարտքը չէ միայն գիտութիւններն յառաջացընել, հայեցական գիտութիւնն ստեղծել, այլ և այն ձեռք բերուած ծանօթութիւնները մերձեցընել ճարտարութեան, և պատառել ջնջել անթափանցական վարագուներն որով կը պատէր երբեմն մարդկային մտաց յառաջադիմութիւնը, և ետեւ ըլլալ թարգմանելու զգիտութիւնը ժարգմանելով զգիտութիւնները ժողովրդական լեզուաւ, ու դիրահասու գործել զայն հասարակ իմացականութեանց:

Փրանկիսկոս Ծքակոյ գիտութեանց նոր դարագլուխ մը կը կազմէ: Ի՞ն անլուր յաջողութիւններն որ ինքն ունեցաւ թարգմանելով զգիտութիւնները ժողովրդական լեզուաւ, և այն յառաջիմութիւններն որ այս հնարքովս պատճառեցան, ցուցըցին ակներև թէ քաղաքականութեան զարգացմունքն կը կախուին մեծապէս ժողովրդական դասուն մտաւոր կրթութենէն: Ի՞նոր համար հիմա Խւրոպա մեծ ջանք կայ տարածելու ժողովրդեան մէջ այն ողջամիտ

### Փրանկիսկոս Ալակոյ :

Եթէ գեղեցիկ է նուիրել բովանդակ կեանքը գիտութեանց զարգացմանն ու բարգաւաճնանացը, և ետևէ ըլլալ ձեռք բերելու այն գաղտնիքներէն մէկ քանին, զոր բնութիւնը մեծաւ պնդութեամբ կը ջանայ ծածկել, որչափ աւելի գեղեցիկ ու գովելի է մասնակցել և զբովանդակ մարդկութիւնը գիտութեան բարերարութեանցը: Եթէ իւրաքանչան լոյն ոք յարդութեամբ գլուխ կը խոնարհեցընէ այս հանձարաւոր մարդկանց առջև, որոնց իմացական տեսութիւնն ամէն բան նկատեց, որոնց խորին միտքն ամէն բան բովանդակեց, որոնց կեանքը շարունակ զօհ մը եղաւ ապահովելու յաղթանակին այն նոր գաղափարաց, որոնք կը տանին քաղաքա-